Երեւի պատոելին գոհ մնաց այդ հարցաքննութեամբ. նա ցոյց տոեց մի այլ աշակերտ, ասելով.

— Տեսնո՞ւմ էք, պարոն, այդ փոքրիկին, այնպէս լաւ սերտել է «Հաւատամքը», որ գիտէ՝ նրա մէջ քանի այբ կայ, քանի բեն կայ, մի խօսքով բոլոր տառերը գիտէ, պարոն, եւ բլբուլի պէս պատասխան կը տայ:

— Երեւի դուք թոաբանութիւնը այդ եղանակով էք սովորեցնում, — նկատեց Ասլանը:

— Ոչ, պարոն, — ասաց պատոելին խորհրդաւոր ձայնով եւ միեւնոյն ժամանակ մի թթու ժպիտ երեւաց նրա թօշնած դէմքի վրայ: — Այստեղ ուրիշ իմաստութիւն կա...

Ես իսկոյն յիշեցի, թէ ինչպէս տէր Թոդիկը ստիպում էր մեզ սովորել, թէ քանի անգամ կրկնւում է աստուծոյ անունը «շնորհեայի» մէջ, եւ միշտ խոստանում էր բացատրել մեզ մի խորհրդաւոր գաղտնիք, որ թաքնուած էր այդ կրկնութիւնների մէջ: Բայց նա ոչինչ չբացատրեց մեզ: Այսպէս էլ Սիմոն պատոելին մեզ չասաց, թէ ինչ «իմաստութիւնէ կար «հաւատամքիէ այբուբենի թոերի մէջ:

Այնուհետեւ պատոելին առաջարկեց իր աշակերտներին զանազան այսպիսի հարցեր:

— Պետրո՛ս, այն ո՞վ էր, որ երկու անգամ ծնոեց, մի անգամ մեռաւ:

— Յովնան մարգարէն, վարժապետ:

— Թորո՛ս, այն ո՞ր անասունն էր, որ մարդու լեզոով խօսեց եւ հրեշտակի ձեռքով սուր քաշեց:

— Բաղաամի էշը, վարժապետ:

— Մարտիրո՛ս, այն ո՞ր թռչունն էր, որին անիծեց Սողոմոն իմաստունը:

— Ճնճղուկը, վարժապետ:

— Ստեփա՜ն, այն ի՞նչ պտուղ էր, որ Ադամը կերաւ, մերկացաւ, Եւան կերաւ, խենթացաւ:

— Թուզը, վարժապետ:

— Տեսնո՞ւմ էք, պարոն, — պատոելին դարձաւ դէպի Ասլանը, — ինչպէս բլբուլի պէս պատասխան են տալիս: — Այդ միջոցին թթու ժպիտը դարձեալ յայտնոեցաւ նրա դէմքի վրայ եւ կարմիր աչքերի կարմիր կոպերը խիստ ծիծաղելի անկիւններ կազմեցին: — Իմ աշակերտները ամբողջ աշխարհում գովուած են, պարոն, այդ քաղաքի մէջ իմ աշակերտները առաջիններն են համարւում, պարոն, ոչ տէրտէր կարող է նրանց հետ խօսել եւ ոչ վարդապետ.